ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1951 *Общественные науки*

Ս. Խալեյան

ՍՏԱԼԻՆՅԱՆ «ԲՐԺՈԼԱ» ԹԵՐԹԸ

(Հրատարակման 50-ամյակի առթիվ)

Արանիկ 50 տարի առաջ, 1901 թվի սեպտեմբերի 4(17)-ին, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ և խմբագրությամբ, նրա մարտական գինակից Լ. Կեցխովելու հերոսական ջանքերով Բաքվում լույս տեսավ Թիֆլիսի ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպության լենինյան իսկրայական խմբի առաջին անլեգալ վրացերեն «Բրձոլա» («Պայքար») թերթը։

«Բրձոլան» լենինյան «Իսկրայից» հետո լավագույն մարքսիստական թերթն էր Ռուսաստանում։

«Բրձոլան» լույս տեսավ լենինյան «Իսկրայի» առաջին համարի լույս ընծայումից 8 ամիս հետո։ Դա պատմական այն ժամանակաշրջանն էր, երբ համաշխարհային կապիտալիզմը թևակոխել էր իր գոյության վերջին շրջանը, իմպերիալիզմի փուլը, իսկ Ռուսաստանը դարձել էր իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետը։ Արդյունաբերական ճգնաժամի պայմաններում, Ռուսաստանում բանվորների տնտեսական գործադուլները արագ կերպով վերածվում էին քաղաքական գործադուլների և հուժկու ցույցերի, որոնք անցնում էին «Կորչի ցարական ինքնակալությունը», «Կեցցե քաղաքական ազատությունը» լոզունգներով։

Համաշխարհային ռևոլուցիայի կենտրոնը արևմտյան Եվրոպայից փոխադրվել էր Ռուսաստան։ Ռուսաստանը դառնում էր սոցիալիզմի ուղին հարթող երկիր, որովհետև «...Ռուսաստանում գոյություն ուներ այն իրական ուժը,—գրում է ընկեր Ստալինը,—որը կարող էր ռևոլուցիոն ճանապարհով լուծել իմպերիալիզմի հակասությունները»։[1] Այդ ուժն էր աշխարհում ամենառևոլուցիոն ռուսական պրոլետարիատը և նրա գեկավարությամբ պայքարող գյուղացիությունը։

Պրոլետարիատի մեծ առաջնորդներ Լենինը և Ստալինը հենց սկզբից բացահայտելով պատմական այդ ժամանակաշրջանի առանձնահատկությունները, պրոլետարիատի քաղաքական պայքարը գլխավորելու և նրան գեպի հաղթանակ տանելու համար նախագծեցին Ռուսաստանի ռևոլուցիոն մարքսիստների սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի ստեղծման հոյակապ պլանը, նոր տիպի պարտիա, որը ի տարբերություն Արևմտաևրոպական ռեֆորմիստական սոցիալ-դեմոկրատական պարտիաների պետք է «...օպորտունիստների վերաբերմամբ լիներ անհաշտ և բուրժուազիայի վերաբերմամբ ռևոլուցիոն, որը լիներ ամուր համախմբված և միաձույլ, որը լիներ սոցիալական ռևոլուցիայի պարտիա, պրոլետարիատի դիկտատուրայի պարտիա»[2], նրա վերջնական նպատակը պետք է լիներ «քա-

---

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 6, էջ 90—91։*

[2] *Համկ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, 1950 թ. էջ 190։*

ղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից և սոցիալիստական հասարակության կազմակերպումը»:[1]

Այդպիսի պարտիա հանդիսացավ Լենինի—Ստալինի ստեղծած բոլշևիկների պարտիան։

Ռուսաստանի բանվորական շարժման մեջ «էկոնոմիստների» հակամարքսիստական հոսանքի առաջ գալու հետևանքով ստեղծված հսկայական դժվարությունների պայմաններում, Վ. Ի. Լենինը նոր տիպի պարտիայի հիմնադրման ելակետը համարում էր համառուսաստանյան քաղաքական անլեգալ թերթի հրատարակությունը, որը պետք է հանդիսանար բանվորական մասսաների հետ սերտորեն կապված պրոֆեսիոնալ ռևոլուցիոներների դաղափարական ու կազմակերպական կենտրոնը։ Նրա օգնությամբ պետք էր գաղափարական ամենահամառ պայքար մղել «էկոնոմիզմի» դեմ, ջախջախել «էկոնոմիզմը»։ Լենինը, բնորոշելով մարքսիստական թերթի դերը, նշում էր, որ լրագիրը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ ու կոլեկտիվ ագիտատոր է, այլև՝ կոլեկտիվ կազմակերպիչ։

Համառուսական քաղաքական այդպիսի լրագիր հանդիսացավ 1900 թվի դեկտեմբերից Լենինի ջանքերով ու խմբագրությամբ լույս տեսած «Իսկրան»։ «Իսկրայի» լույս ընծայումը նոր էտապ հանդիսացավ բանվորական և սոցիալ-դեմոկրատական շարժման պատմության մեջ Ռուսաստանում։

Լենինյան «Իսկրայի» էջերում լույս տեսած աշխատություններում և մասնավորապես, «Ինչ անել» գրքում, Վ. Ի. Լենինը իդեոլոգիապես նախապատրաստեց մարքսիստական պարտիայի հիմնադրումը, հրաշալի կերպով պրոպագանդայի ենթարկեց և զարգացրեց ռևոլուցիոն մարքսիզմը և գլխովին ջախջախեց «էկոնոմիզմը»։

Լենինի գլխավորությամբ «Իսկրան» մշակեց ՌՍԴԲՊ-ի ծրագրի նախագիծը։ Լենինը համառ պայքարով Պլեխանովի և մյուսների հարձակումներից պաշտպանեց մարքսիզմի հիմնական բովանդակությունը կազմող՝ պրոլետարիատի դիկտատուրայի կետը ծրագրում, հստակորեն մատնանշեց բանվոր դասակարգի ղեկավար դերը ռևոլուցիայի մեջ, շարադրեց և ձևակերպեց ագրարային գյուղացիական հարցին վերաբերող կետերը։

Լենինյան «Իսկրան» համաշխարհային բանվորական շարժման պատմության մեջ մտավ որպես ամենահետևողական մարքսիստական թերթը, որն անողոք պայքարով մերկացրեց ու անարգանքի սյունին գամեց միջազգային օպորտունիզմը՝ բերնշտայնականությունը, տրեդյունիոնիզմը, տարերայնության առաջ խոնարհվելու, քաղաքական պայքարից հրաժարվելու, բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցության ու քաղաքական պարտիայի ղեկավար դերի նշանակությունը ժխտելու նրանց բուրժուական բոլոր քարոզները։ «Իսկրա»-ն ամենաեռանդուն աշխատանք ծավալեց միասնական ծրագրով, կազմակերպչական և տակտիկական սկզբունքներով նոր տիպի պարտիա ստեղծելու համար։

Անդրկովկասում լենինյան «Իսկրայի» գիրքերի վրա առաջինը կանգնեց Ի. Վ. Ստալինի, Ա. Ծուլուկիձեի և Լ. Կեղխովելու ռևո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 281։

լուցիոն սոցիալ-դեմոկրատական խումբը, որը հանդիսացավ Անդրկովկասում լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմքը և հետևողականորեն պայքար մղեց պարտիայի կառուցման լենինյան պլանի իրականացման համար։

Ուղղակի ունենալով լենինյան «Պայքարի Միության» գործունեությունը, անշեղորեն հետևելով նրա օրինակին, ընկեր Ստալինը նեղ խմբակային պրոպագանդայից մասսայական քաղաքական ագիտացիային անցնելու, ինքնակալության և բուրժուազիայի դեմ բացահայտ ռևոլուցիոն պայքար մղելու և ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական պարտիա ստեղծելու համար առաջ քաշեց անլեգալ մարքսիստական լրագրի կազմակերպման հարցը Անդրկովկասում։ Այդ հարցը ընկեր Ստալինը առաջ էր քաշել դեռևս 1898 թվին, գլխավորելով «Մեսամե դասիթ»-ի ռևոլուցիոն փոքրամասնության խմբի պայքարը ընդդեմ «Մեսամե դասիթ»-ի ժորդանիայի գլխավորած օպորտունիստական մեծամասնության, ընդդեմ նրանց լեգալ մարքսիստական, նացիոնալիստական գաղափարների։ «Մեսամե դասիթ» փոքրամասնությունը, հսկայական նշանակություն տալով անլեգալ մամուլին,—գրում է ընկեր Լ. Բերիան,—ռևոլուցիոն մարքսիզմի պրոպագանդան մղելու և այն տարածելու, ինքնակալության ու կապիտալիզմի դեմ քաղաքական ագիտացիա մղելու, բանվոր դասակարգի քաղաքական պայքարը կազմակերպելու և իսկական պրոլետարական ռևոլուցիոն պարտիա կառուցելու գործում, անլեգալ բերբ ստեղծելու խնդիր էր առաջադրում»։[1]

Ընկեր Ստալինը այդ նպատակով կեցխովելու և առաջավոր բանվորների հետ միասին իր գործունեության հենց սկզբից ձեռնամուխ է լինում Թիֆլիսում, Բաքվում և մյուս վայրերում ընդհատակյա տպարանների կազմակերպման գործին։

1900 թ. ընկեր Ստալինը Թիֆլիսի կենտրոնական պարտիական խմբի կողմից Բաքու է ուղարկում Լ. Կեցխովելուն՝ պարտիական աշխատանքը ուժեղացնելու և այնտեղ ընդհատակյա տպարան կազմակերպելու համար։

Հենց այդ շրջանում 1901 թ. սկզբներին Թիֆլիս և Բաքու են հասնում լենինյան «Իսկրայի» առաջին համարի օրինակները։

Լենինի մարտական հոդվածները, տպագրված «Իսկրայի» էջերում ոգեշնչում են Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատներին։ «Իսկրայի» հոդվածները եթե ընկեր Ստալինի մոտ «արդեն կազմակերպված հայացքների հեղինակավոր հաստատումն» էր,—գրում է Մ. Ի. Կալինինը,—ապա շատ ռևոլուցիոնիստների համար նա ավելի պարզորոշ դարձրեց բանվոր դասակարգի նպատակները։[2]

«Իսկրայի» համարների ստացումը նոր խթան հանդիսացավ Անդրկովկասում անլեգալ թերթ հրատարակելու նախապատրաստություններին։ Ընկեր Ստալինը Թիֆլիսի դեկավար պարտիական խմբի կողմից Բաքվի տպարանի համար սիստեմատիկաբար ուղարկում էր տառեր, սարքավորում, գրամ էր հայթհայթում, գրաշարներ էր ուղարկում, որի հետևանքով Լ. Կեցխովելին խիզախ կոնսպիրատորի հմտությամբ կարողացավ կարճ

[1] Լ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», Հայպետհրատ, 1943 թ., էջ 17։ Ընդգծումը մերն է, Ե. Թ.։

[2] Տես Մ. Ի. Կալինին, «Ընկեր Ստալինի ծննդյան վաթսունամյակի առթիվ», Երևան, Բաղհրատ, 1940 թ., էջ 9։

ժամանակամիջոցում ամփոփել տպարանի կառուցումը, որը հանդիսացավ մեր պարտիայի այդ ժամանակվա ամենամեծ ընդհատակյա տպարաններից մեկը, և չնայած ժանդարմերիայի կատաղի հետապնդումներին, երկար ժամանակ ծածուկ թաքնված, աշխատեց մեծ լարվածությամբ և արդյունավետ կերպով։

Այս տպարանում 1901 թ. սեպտեմբերին լույս տեսավ լենինյան Իսկրայական ուղղության «Բրձոլա» թերթը։ Թերթի համար ղեկավար հոդվածներ գրում էր ընկեր Ստալինը։ Նրան հոդվածներ էին ուղարկում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական խմբի նաև մյուս անդամները՝ Ա. Ծուլուկիձեն, Վ. Բոլկվաձեն, Բոճորիձեն և ուրիշները։ «Մի շարք հոդվածներ Լադոն ինքն էր գրում—գրում է ընկեր Բերիան—միաժամանակ կատարելով խմբագրի, սրբագրիչի, գրաշարի ու տպագրիչի դերը, սիրով առաջ տանելով այդ բարդ և օրակի հետ կապված գործը»։[1]

Կեցխովելին «Բրձոլայի» և Բաքվի կազմակերպության աշխատանքների կապակցությամբ շարունակ գրավոր կապ էր պահպանում ընկեր Ստալինի հետ, իսկ կարևոր հարցերի դեպքում ցուցումներ ստանալու համար անձամբ գալիս էր Թիֆլիս կամ Բաքու՝ ընկեր Ստալինի մոտ։

Շուտով «Բրձոլայի» տպարանը ստանում է համապարտիական նշանակություն։ Նույն 1901 թվին ընկեր Ստալինի ցուցումով, Բաքվի լենինյան—իսկրայական սոցիալ-դեմոկրատական խմբի կողմից Լ. Կեցխովելին կապեր է հաստատում Վ. Ի. Լենինի հետ, լայնացնում է տպարանը և Լենինի անմիջական առաջադրանքով ձեռնամուխ է լինում «Իսկրա»-ի համարների բազմացմանը Բաքվում։

Վիեննա Թավրիզ—Բաքու, Մարսել—Բաքու—Բաքու գծով արտասահմանից «Իսկրա» թերթի ու իսկրայական մյուս հրատարակությունների հետ միասին Վ. Ի. Լենինը Բաքու է ուղարկում «Իսկրայի» մատրիցաները։ Այդպիսով հնարավոր է դառնում «Իսկրայի» մի շարք համարները (7-ից մինչև 11 համարները) բազմացնել Բաքվում և «Բրձոլա» թերթի հետ միասին լայնորեն տարածել Կովկասում և Թուրքիայի հարավային երկրամասերում։ Հենց այս տպարանում էլ տպագրվում և տարածվում են հայերեն առաջին կոչերն ու պրոկլամացիաները։ Մոտավոր հաշվով Բաքվի այդ տպարանը հրատարակել է ավելի քան մեկ միլիոն օրինակ թերթ, կոչեր և զանազան անլեգալ գրականություն։

Բաքվի տպարանում աշխատող, «Բրձոլայի» գրաշարներից Վիկտոր Ցուլաձեն իրենց աշխատանքների մասին գրում է հետևյալը. «Լենինյան «Իսկրայի» խմբագրությունը տպարանին «Ենինա» կոնսպիրատիվ անունն էր տվել, իսկ Լադոյին անվանում էին «Ենինայի հայրը»։ Մենք աշխատում էինք Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական խմբի, և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ։ Մենք միայն «Բրձոլան» չէ, որ տպագրում էինք։ Եթե օրինակ, տպագրել եմ «Իսկրա» թերթի մի քանի համարները, շատ բրոշյուրներ, պրոկլամացիաներ, թերթիկներ։ Հետագայում ինձ գործուղեցին Թիֆլիս, որտեղ ես աշխատեցի ինչպես լեգալ, այնպես էլ ընդհատակյա տպարաններում, այդ թվում Հավքարարի տպարանում»։[2]

---

[1] Լ. Բերիա, «Լադո Կեցխովելի», Հայկուսհրատ, 1937 թ., Երևան, էջ 13։

[2] Տես „Огонек" № 36, 1951 г. „Он набирал „Брдзола„" հոդվածը։

Այսպիսով, Անդրկովկասում անլեգալ մամուլի, քաղաքական լրագրի ստեղծման համար ընկեր Ստալինի և իր մարտական զինակիցների մի քանի տարվա լարված պայքարը 1901 թ. պսակվում է հաջողությամբ։ Ռևոլուցիոն բանվորական շարժման աճման, ռևոլուցիոն աշխատանքի կազմակերպման գլխավորագույն միջոցներից մեկն է դառնում պարբերական հրատարակությունը։ Նրա միջոցով սոցիալիստական գիտակցություն է մտցվում բանվորական շարժման մեջ, հնարավոր է լինում համախմբել սոցիալ-դեմոկրատական ուժերը ՌՍԴԲ միասնական մարքսիստական պարտիայի մեջ և նրա ղեկավարությամբ պրոլետարիատին առաջնորդել հաղթական պայքարի՝ ընդդեմ ցարիզմի ու բուրժուազիայի։

Այս խնդիրների իրականացման գաղափարներով էր տոգորված ընկեր Ստալինի գլխավորած՝ Թիֆլիսի պարտիական կենտրոնական խումբը, որը 1898—1900 թվականների գործադուլներից, 1901 թ. ապրիլի 22-ի մայիսմեկյան հուժկու քաղաքական ցույցից հետո, իր քաղաքական և կազմակերպչական աշխատանքները պսակեց լենինյան իսկրայական ուղղության «Բրձոլա» անլեգալ թերթի լույս ընծայումով և նույն թվի նոյեմբերին ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի ընտրությամբ, որի կազմի մեջ մտավ ընկեր Ստալինը։

Հենց սկզբից ամենասերտ կապեր են հաստատվում «Իսկրայի» և Անդրկովկասի ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ու նրա անլեգալ օրգան «Բրձոլայի» միջև։ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեները՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ անվերապահորեն միանում են լենինյան «Իսկրային», անց են կացնում նրա իդեական և կազմակերպական սկզբունքները, դառնում են Լենինի և լենինյան «Իսկրայի» համար ամուր հենարաններ։ «Ռևոլուցիոն մարքսիզմի գաղափարների լայն քաղաքական ագիտացիայի ու պրոպագանդայի հիման վրա,—գրում է ընկ. Լ. Բերիան,—միասնական ռևոլուցիոն պարտիա կազմակերպելու վերաբերյալ, «Իսկրա» թերթի գաղափարը «Բրձոլա» թերթը դարձրեց իր ղեկավար սկզբունքը»։[1]

Անդրկովկասի ռևոլուցիոն բանվորական շարժումները, մամուլի ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքը մշտապես «Իսկրայի» ուշադրության կենտրոնումն էր։[2] «Իսկրան» իր № 20-ում «Սոցիալ-դեմոկրատական աշխատանքի աշխուժացումը Թիֆլիսում 1901 թ. մայիսի 1-ից հետո» թղթակցության մեջ հրճվանքով հաղորդում է, որ «Երևան եկան,— վրացական լեզվով «Բրձոլա» թերթը («Պայքար») և մի քանի թարգմանական բրոշյուրներ։ Հիանալի գրված պրոկլամացիաները լույս էին տեսնում ռուսերեն, վրացերեն ու հայերեն լեզուներով և հեղեղում Թիֆլիսի բոլոր թաղամասերը»։[3] «Բրձոլայի» համարները լույս էին տեսնում 1000-ական օրինակ տիրաժով։

---

[1] Լ. Բերիա. «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը». Հայպետհրատ, 1943, էջ 44։

[2] Լենինյան «Իսկրայի» 1900—1903 թթ. լույս տեսած համարներում ավելի քան 80 հոդվածներ, թղթակցություններ, ինֆորմացիաներ, նամակներ, հաղորդումներ են տպագրվել Անդրկովկասի ռևոլուցիոն բանվորական շարժումների և ս. դ. կազմակերպությունների աշխատանքների մասին։

[3] «Իսկրա» № 25, 15 սեպտ., 1902 թ.։

«Բրձոյանն» իրեն համարում էր համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական շարժման տեղական անկեղծ օրգանը և պաշտպանում էր Անդրկովկասի պրոլետարիատի պայքարի անխզելի կապը Ռուսաստանի բանվոր դասակարգի ռևոլուցիոն պայքարի հետ։ Նա իր էջերում կոչ էր անում Անդրկովկասի պրոլետարիատին և աշխատավորությանը՝ միանալ ռուս պրոլետարիատի հետ, համատեղ պայքար մղել ցարիզմի և բուրժուազիայի դեմ։ «Մի մոռանաք, — գրում էր Թերթը դիմելով Անդրկովկասի բանվորներին, — որ դուք մենակ չեք։ Ձեզ հետ միասին պայքարում է ամբողջ Ռուսաստանի բանվոր ժողովուրդը։ Այդպես ուրեմն, բանվորներ, ձեռք մեկնենք մեր Ռուսաստանյան եղբայրներին. ձեռք-ձեռքի տված գրոհենք թշնամու դեմ և միահամուռ կերպով ապդարարենք

«Պեցցի քաղաքական ազատությունը»

«Կորչի բռնակալությունը»։[1]

Ստալինյան «Բրձոյանն» լենինյան «Ռոկրայի» օրինակով հետևողականորեն պաշտպանում և պրոպագանդա էր անում ստեղծագործական մարքսիզմի ուսմունքը։ «Բրձոյանն» լենինյան «Ռոկրայի» համատարիմ օգնականն էր Ռուսաստանում, նոր տիպի պարտիայի ստեղծման համար՝ նրա մղած պատմական մեծ պայքարում։

«Բրձոյայի» հենց առաջին համարի «Խմբագրության կողմից» առաջնորդողը և «Քաղաքական պայքարը» հոդվածը հարազատորեն արձագանքում էին Լենինի «Մեր շարժման կենսական խնդիրները» և «Ինչից սկսել» հոդվածներին, որոնք հրապարակվել էին «Ռոկրայում»։ «Բրձոյայի» առաջին համարի «Խմբագրության կողմից» ծրագրային առաջնորդողը պատկանում է ընկեր Ստալինին։ Նա լենինյան դիրքերից հիմնավորելով անկեղծ «Բրձոյա» Թերթի և ընդհանրապես մարքսիստական մամուլի խնդիրները, գրում է՝ «...վրացերեն ազատ պարբերական հրատարակությունը սոցիալ-դեմոկրատական շարժման անհետաձգելի պահանջն է»։ «Վրացերեն Թերթը պետք է միաժամանակ համապարտիական և շրջանային, տեղական օրգանի դեր խաղա»։ Նա «պարտավոր է ընթերցողին ծանոթացնելու բոլոր սկզբունքային թեորիական ու տակտիկական հարցերին։ Դրա հետ միասին Թերթը պարտավոր է գլխավորելու տեղական շարժումը և պատշաճ կերպով լուսաբանելու յուրաքանչյուր դեպք... կապի ու միավորի վրացի և ռուս պայքարող բանվորներին ...Թերթը որպես սոցիալ-դեմոկրատների օրգան, պետք է գլխավորի բանվորական շարժումը, նրան ուղի ցույց տա, նրան վերծ պահի սխալներից։ Մի խոսքով, Թերթի ամենաառաջին պարտականությունն է՝ որքան կարելի է մոտ կանգնել բանվորական մասսային, հնարավորություն ունենալ շարունակ ազդելու նրա վրա, լինել նրա գիտակից ու զեկավար կենտրոնը»։[2]

Թերթը միևնույն ժամանակ պետք է լինի «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի ներկայացուցիչը և իր ժամանակին հաղորդի ընթերցողներին այն բոլոր տակտիկական հայացքների մասին, որ պաշտպանում է ռուսաստանյան ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիան։ Նա պետք է ընթերցողներին իրազեկ դարձնի, թե ինչպես են ապրում բանվորները

---

[1] «Բրձոյա» № 2—3—1901 թ.։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ 1, էջ 6—8։

մյուս երկրներում, ինչ և ինչպես են անում նրանք իրենց գրությունը բարելավելու համար, և ժամանակին կոչ անի վրացական բանվորներին կռվի դաշտ դուրս գալու։ Միաժամանակ թերթը չպետք է առանց հաշվառման և առանց սոցիալ-դեմոկրատական քննադատության թողնի և ոչ մի հասարակական շարժում»։[1]

Այդ նույն հոդվածում ընկեր Ստալինը կարմիր թելի նման անց է կացնում պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի պաշտպանությունը, նա գրում է, որ «Ռուսաստանում և առհասարակ ամենուրեք միայն ուսուցիչ պրոլետարիատն է պատմության կողմից կոչված մարդկությունն ազատագրելու և աշխարհին երջանկություն տալու»։[2]

«Բրձոլայի» հաջորդ 2—3 միացյալ համարը լույս է տեսնում 1901 թ. նոյեմբեր-դեկտեմբերին։ Հրապարակված ծավալուն հոդվածների, հաղորդումների մեջ հրաշալի կերպով արծարծված են պրոլետարիատի պայքարի թեորիական և ծրագրային կարևոր շատ հարցեր, համարին օգտագործված են Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստի» և Վ. Ի. Լենինի աշխատությունների դրույթները։ Այդ համարի առանցքն է կազմում ընկեր Ստալինի «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան և նրա մերձավորագույն խնդիրները» հոդվածը, որի մեջ ընկեր Ստալինը ասդանդավոր կերպով ընդգծում է դիտական սոցիալիզմը տարբերային բանվորական շարժման հետ միացնելու և ցարիզմի դեմ բանվորների խմբակային պրոպագանդայից մասսայական-քաղաքական ագիտացիայի անցնելու անհրաժեշտությունը. քայլ առ քայլ մերկացնելով ռուսական և վրացական «էկոնոմիստներին», բացահայտում է ուտոպիական սոցիալիզմի անանկությունը և անողոք քննադատության է ենթարկում միջազգային օպորտունիզմի լիդեր Բերնշտայնի ու նրա համախոհների ռեֆորմիստական ուսմունքը։ «...ռուսական սոցիալ-դեմոկրատների այդ մասը,—գրում է ընկեր Ստալինը «էկոնոմիստների» մասին,—գարձավ բուն իսկ շարժման կույր գործիքը. նա կուրորեն հետևում էր բանվորների բավականաչափ չզարգացած մասին և սահմանափակվում էր այն կարիքների, այն պահանջմունքների ձևակերպումով, որ այդ մոմենտին գիտակցել էր բանվորական մասսան։ Մի խոսքով, նա կանգնած էր և բախում էր բաց դուռ. չհամարձակվելով մտնել հենց տունը։ Նա անընդունակ գտնվեց բացատրելու բանվորական մասսային վերջնական նպատակը—սոցիալիզմը կամ թեկուզ մերձավորագույն նպատակը—ինքնակալության տապալումը, և, որ ավելի ցավալի է, այդ բոլորը նա անօգուտ էր համարում և նույնիսկ վնասակար»։[3]

Ընկեր Ստալինը մերկացնում է «էկոնոմիզմի» դաղափարական անանկությունը, «էկոնոմիստների» ռեֆորմիստներ լինելու, պրոլետարիատի արմատական շահերին դավաճանելու ողջ էությունը։ Ընկեր Ստալինը նշում է, «...որ ռուսական սոցիալ-դեմոկրատների այդ մասն այն աստիճան ընդարձակել է իր արևմտաեվրոպական ուսուցիչների (Բերնշտայն և Ընկ.) ուսմունքը, որ անամոթաբար հայտարարում է. քաղաքական ազատությունը... համատեղելի է ցարիզմի հետ, ուստի և հատուկ քաղաքական

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 10։
2 Նույն տեղում, էջ 8։
3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 19—20։

պայքարը, ինքնակալությունը տապալելու համար մղվող պայքարը միանգամայն ավելորդ է, որովհետև նպատակին հասնելու համար, բանից դուրս է գալիս, բավական է միայն տնտեսական պայքարը»։[1]

Այսպիսով, «էկոնոմիստների» դրոշը մնում էր տնտեսական պայքարն իր կոպեկանոց գեմիզով, բնականաբար՝ «...բանվորները պետք է այդ պայքարի մեջ ավելի քիչ եռանդ, ավելի քիչ հրապուրանք, ավելի քիչ ռևոլուցիոն ձգտումներ մտցնեին,—ասում է ընկեր Ստալինը,—որովհետև մեծ եռանդը միայն մեծ նպատակի համար է ծնվում»։[2]

Այդ հոդվածում ընկեր Ստալինը հանճարեղորեն հիմնավորում է միասնական ռևոլուցիոն մարքսիստական պարտիայի և բանվոր դասակարգի բայարձակ, քաղաքական պայքարի ու փողոցում կազմակերպվող ցույցերի անհրաժեշտությունը, բանվոր դասակարգի հեգեմոն դերը դեմոկրատական ռևոլուցիայի մեջ։ «Փողոցային ցույցը,—գրում է ընկեր Ստալինը,—հետաքրքրական է նրանով, որ նա արագորեն շարժման մեջ է ներգրավում բնակչության մեծ մասսա, միանգամից ծանոթացնում է նրան մեր պահանջներին և ստեղծում է այն բարենպաստ լայն հողը, որտեղ մենք համարձակ կարող ենք ցանել սոցիալիստական գաղափարների և քաղաքական ազատության սերմերը։ ...փողոցի ցույցերում մեր այսօրվա կրած զոհերը հարյուրապատիկ կհատուցվեն մեզ։ Պայքարում ընկած կամ մեր բանակից դուրս կորզված յուրաքանչյուր մարտիկ հարյուրավոր նոր մարտիկներ է ոտքի հանում։ Մենք դեռևս շատ անգամ ենք պարտվելու փողոցում, դեռ շատ անգամ է կառավարությունը փողոցային մարտերից հաղթող դուրս գալու։ Սակայն այդ «պյուրրոսյան հաղթությունն» կլինի։ Եվ մի քանի այդպիսի հաղթություն—և արսոլուտիզմի պարտությունն անխուսափելի է։ Այսօրվա հաղթությամբ նա իր պարտությունն է պատրաստում։ Եվ մենք, հաստատ համոզված, որ այդ օրը գալու է, որ այդ օրը հեռու չէ, մտնում ենք մտրակների հարվածների տակ, որպեսզի քաղաքական ագիտացիայի և սոցիալիզմի սերմերը ցանենք։

Իշխանությունը մեզնից քիչ չի համոզված, որ փողոցի ագիտացիան մահվան գատավճիռ է իրեն համար, որ բավական է դարձյալ 2—3 տարի անցնի—և նրա առաջ կկանգնի ժողովրդական ռեվոլուցիայի ուրվականը»։[3] Ուստի բայարձակ ցույցերը և ռևոլուցիոն շարժումները դեկավարելու և այն հաղթանակի տանելու համար բանվոր դասակարգը պետք է կազմակերպեր իր ինքնուրույն քաղաքական միասնական պարտիան, «որը համախմբված լինի ոչ միայն անունով, այլև իր հիմնական սկզբունքներով և տակտիկական հայացքներով։ ... Նա պետք է իր ձեռքը վերցնի Ռուսաստանյան դեմոկրատիայի դրոշը և այն դեպի ամենքի համար ցանկալի հաղթությունը տանի»։[4]

«Երձգայիս» էջերում ընկեր Ստալինը արձանագրում է, որ ցարական լծի տակ միայն բանվոր դասակարգը չէ, որ հեծում է, նրա ծանր խաչի տակ խեղդվում են գյուղացիները, ծառայողները, ուսանողությունը և մյուս շահագործվողները։ Զուրկ են ամեն տեսակի իրավունքներից ճընշված ազգերը, հրեաները, վրացիները, հայերը և մյուսները, նրանք իրա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 20—21։
[2] Նույն տեղում, էջ 22—23, վերջին տողերի ընդգծումները մերն են Ե. Խ.
[3] Նույն տեղում, էջ 29—31։
[4] Նույն տեղում, էջ 32։

վանք չունեն իրենց դպրոցներն ու կուլտուրան ունենալու, հարկադրված են ենթարկվելու ռուսացմանը։

Այս բոլորի ընդհանուր թշնամին ինքնակալությունն է։ Ճնշվածների դեմոկրատական պայքարի գլուխը պետք է անցնի բանվոր դասակարգը։ Այնուհետև անդրադառնալով 1901 թ. ընթացքում Ռուսաստանի համապարանական խոշոր քաղաքներում ծավալված ուսանողական ցույցերին, ընկեր Ստալինը նշում է. «Իհարկե, ուսանողությունն իր ուժերով չի կարող այդ վիթխարի պայքարը մղել, նրա թույլ ձեռքերը չեն կարողանա պահել այդ ծանր դրոշը։ Այդ դրոշը պահելու համար ավելի ուժեղ ձեռքեր են հարկավոր, և այժմյան պայմաններում այդպիսի ուժ է հանդիսանում միայն բանվոր ժողովրդի միացյալ ուժը։ Հետևապես, բանվոր դասակարգը պետք է ուսանողության թույլ ձեռքերից վերցնի ամբողջ Ռուսաստանի դրոշը և, նրա վրա գրելով «Կորչի ինքնակալությունը. կեցցե՛ դեմոկրատական կոնստիտուցիան»,—ռուս ժողովրդին տանի դեպի ազատություն»։[1]

Ընկեր Ստալինը իր հոդվածում պահանջում է համառ պայքար մղել և անխնա մերկացնել ռևոլուցիայի գործը անամոթաբար վաճառող, ինքնակալության հետ հաշտության ձեռք մեկնող լիբերալ բուրժուազիային, որին օպորտունիստները մոտեցող բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի մեջ դեկավար դեր էին հատկացնում։ «Միայն բանվոր դասակարգն է,—գրում էր ընկեր Ստալինը,—իսկական դեմոկրատիայի հուսալի հենարանը։ Միայն նա չի կարող համաձայնություն գալ ինքնակալության հետ ինչ-որ մի կիջեցողության համար և չի թողնի քնեցնել իրեն, երբ նրա համար քաղաքական երգել սկսեն կոնստիտուցիոն քնարի հնչյունների տակ»։[2]

«Բրձոլայի» ինչպես առաջին, նույնպես և 2—3 ու վերջին 4-րդ համարում լույս տեսան բազմաթիվ այլ հոդվածներ, որոնց մեջ թերթը անողոքաբար մերկացնում էր բուրժուական նացիոնալիզմը և Անդրկովկասի վրացի, հայ, ռուս, ադրբեջանական բանվորներին ու գյուղացիներին դաստիարակում էր ինտերնացիոնալ համերաշխության ոգով, նրա առաջավոր ներկայացուցիչներին կոչ էր անում միավորվել ՌՍԴԲ պարտիայի շարքերում, սովորեցնում էր ազգային հարցի լուծումը ենթարկել սոցիալականին։ Այդ հոդվածների թվին են պատկանում Լ. Կեցխովելու «Հարյուրամյա հոբելյանի առթիվ» ինչպես նաև «Հասարակությունը և կառավարությունը», «Նացիոնալիզմը և սոցիալիզմը» հոդվածները և ուրիշները։

Լ. Կեցխովելին դիմակազերծ էր անում վրացական ազնվականությանը, բուրժուազիային, որոնք ձեռք-ձեռքի տված գաղութարար ինքնակալության հետ, համատեղ ճնշում ու շահագործում էին կարիքի, ստրկության մեջ տառապող բանվորներին և հողազուրկ գյուղացիությանը։ Կեցխովելին իր «Հարյուրամյա հոբելյանի առթիվ»[3] հոդվածում ասում էր, որ բանվորների և գյուղացիների իսկական տոնը կլինի այն ժամանակ, երբ ռուս, վրացի, հայ և մյուս ազգությունների բանվորները միասնական ուժով տապալեն ցարիզմին ու կալվածատիրությանը։ «Մոտ է հաշվեհարդարի օրը,—գրում էր նա,—բազմապատկվում են բանվորների ուժերը,

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 28—29։

2 Նույն տեղում, էջ 34։

3 «Հարյուրամյա հոբելյանի առթիվ» հոդվածը Թիֆլիսի ս. դ. կազմակերպությունը հրատարակեց նաև որպես առանձին պրոկլամացիա «Վրացական բանվորներին» վերնագրով։

նրանց հոգևոր միասնությունը սարսափեցնում է նեխվող կառավարությանը և սուր ավիններին այլևս ուժ չունեն կանգնեցնելու այդ միասնության վիթխարի աճը։ Նրա տպագան ապահովված է հենց պատմությամբ»[1]

Նշանավոր հոդվածների թվին է պատկանում «Բանվորական շարժումը Անգրկովկասում 1899—1901 թ. թ.» ծավալուն տեսությունը, որի հարուստ տվյալների շարադրությամբ՝ «Իսկրան» իր № 12-ում, «Բանվորական շարժումը 1900 թ. հունվարից մինչև Հոկտեմբերը» վերնագրով մի հատուկ թղթակցություն տպագրեց Թիֆլիսի բանվորական շարժման մասին։ «Բրձոլան» սերտորեն կապված էր բանվորների և գյուղացիների հետ, նրանցից ստանում էր բազմաթիվ թղթակցություններ, որոնք զետեղվում էին «Խրոնիկա», «Թղթակցություններ» բաժիններում. Նամակներ՝ Բաքվից, Թիֆլիսից, Բաթումից խորագրի տակ, հրապարակում էր պարտիայի և երկրի ներքին կյանքին վերաբերյալ տեսություններ, տպագրում էր ինքնուրույն և թարգմանական ռևոլուցիոն բանաստեղծություններ «Մարսելիոզ», «Ալարշավյանկա», «Էնկերներին», «Բրձոլա» թերթին, Սիբիրի ցարական աքսորում վախճանված Լ. Յաշվիլու գրած ոտանավորը 1901 թվի Թիֆլիսի մայիսմեկյան քաղաքական ցույցին նվիրված, «Ապրիլի 22-ը» և այլն։

«Բրձոլան» հանդամանորեն մերկացնում էր ցարիզմի գեսպոտիզմը և ռեակցիոնականությունը, յայնորեն լուսաբանում էր բանվորական շարժումը, ցույց էր տալիս, թե ինչպես Ռուսաստանի և Անգրկովկասի բանվորների հուժկու գործադուլները և ցույցերը բանվորական շարժումը դուրս են բերել քաղաքական պայքարի լայն ասպարեզ։ Թերթը մասսաների սեփականությունն էր դարձնում նրանց փառապանծ պայքարի հարուստ փորձը, վճռական գոտեմարտի էր կոչում Անգրկովկասի աշխատավորությանը։

Ուշագրավ են «Բրձոլայի» 4-րդ համարում զետեղված «Պայքարը կառավարության դեմ ժողովրդի առաջնակարգ և սրբազան պարտքն է» առաջնորդող, «Սոցիալ-դեմոկրատական պայքար», «Ինչպես ենք մենք նայում տեսորի վրա» հոդվածները, մի շարք նյութեր նվիրված Իմերեթիայի, Դուրիայի Մինգրելիայի և ընդհանրապես Անգրկովկասի և Ռուսաստանի գյուղացիական շարժումների լուսաբանությանը։ Այդ հոդվածների մեջ, «Բրձոլան» ղեկավարվելով բանվոր դասակարգի և գյուղացիական դաշինքի լենինյան-ստալինյան գաղափարով, «Իսկրայի» օրինակով, կոչ էր անում գյուղացիությանը՝ բանվոր դասակարգի առաջնորդությամբ պայքարի ելնել շահագործողների դեմ։

Լենինյան «Իսկրայի» և ստալինյան «Բրձոլայի» գաղափարները տարածվում էին Վրաստանի և ողջ բազմազգ Անգրկովկասի բանվորների ու աշխատավորների լայն շրջաններում։ Նրանք ամուր բազա էին ստեղծում նաև տեղական ազգային մյուս լեզուներով, այդ թվում նաև հայերեն լեզվով, լենինյան իսկրայական ուղղության գրականության ու թերթերի ստեղծման համար։

* * *

Ընկեր Ստալինը իր ռևոլուցիոն գործունեության հենց առաջին տարիներից մեծ հոգատարությամբ կազմակերպում և ուղղություն էր տալիս

[1] „Ладо Кецховели". Сборник, стр. 52—53. изд. 1938 г.

հայ բանվորների և աշխատավորների ռևոլուցիոն պայքարին՝ ընդգծմ շահագործողների ու ճնշողների, դաստիարակում էր պրոլետարիատի գործին նվիրված սոցիալ-դեմոկրատ պրոֆեսիոնալ ռևոլուցիոներներ և մամուլի գործիչներ, որոնցից էին Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, առաջավոր բանվոր պրոպագանդիստներ՝ Մելիք Մելիքյանը («Դեգուշկանց»), Պողոս Փիլոսյանը և ուրիշներ։ Ընկեր Ստալինն է եղել հայերեն անլեգալ բոլոր հրատարակությունների ու թերթերի կազմակերպման ներշնչողն ու ղեկավարը։ Հայերեն լեզվով սոցիալ-դեմոկրատական մամուլի ու գրականության պահանջը խիստ մեծ էր, հայ բանվորները ավելի քան կարիք ունեին սոցիալ-դեմոկրատական տպագիր պրոպագանդայի ու ագիտացիայի, քանի որ բուրժուական նացիոնալիստները — արկածախնդիր դաշնակցականները, հնչակյանները և մյուսները անպատիժ կերպով այլասեռում էին հայ բանվորների դասակարգային գիտակցությունը։ Ընկեր Ստալինը օգնում և ցուցումներ էր տալիս հայ սոցիալ-դեմոկրատներին՝ վճռական միջոցների դիմելու, մերկացնելու և ջախջախելու բուրժուական նացիոնալիստներին՝ դաստիարակել հայ բանվորների մեջ դասակարգային ինքնագիտակցությունը, նրանց համախմբել սոցիալ-դեմոկրատական ինտերնացիոնալ դրոշի տակ, Ռուսաստանի և Անդրկովկասի պրոլետարիատի հետ միասին պայքարի հանել ինքնակալության և բուրժուազիայի դեմ։

«Բրձոլայի» աշխատանքների ղեկավարման զուգընթաց ընկեր Ստալինը հայերեն հրատարակությունների կազմակերպման համար նյութական միջոցներ էր հայթայթում, ընդհատակյա հմուտ աշխատողներ Կեցխովելուն, Բոճորիձեին, Թոդրիային, Սիմոն Տեր-Պողոսյանին (Կամոյին) և մյուսներին համապատասխան հանձնարարություններ էր անում, անձամբ մասնակցում էր հայերեն շրիֆտ ձևոք բերելու աշխատանքներին, որոնցով համալրում էր Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի տպարանների տեխնիկական բազան։

Այս ձեռնարկումները մեծ արդյունքներ տվին։ 1900—1902 թվականների ընթացքում տպագրվեցին և լայնորեն տարածվեցին թարգմանական առաջին սոցիալ-դեմոկրատական հայերեն ստալինյան բոցաշունչ կոչերն ու պրոկլամացիաները։ Ընկեր Ստալինը Թիֆլիսի կոմիտեին և հայ սոցիալ-դեմոկրատներին բացատրում էր, որ պետք է ձեռնամուխ լինել նաև հայերեն լեզվով անլեգալ թերթի հրատարակությանը։ «Բրձոլայի» լույս ընծայումը մեծապես խթանեց այդ գործին։

Ինչպես հայտնի է, 1900—1902 թվականների ընթացքում ընկեր Ստալինի գլխավորած Թիֆլիսի ղեկավար պարտիական խմբի հետ միասին ակտիվ աշխատանք էր կատարում հայ իսկրայականների մի խումբը, որը 1902 թվականին ձևավորվեց որպես «Հայ սոցիալ դեմոկրատների Միություն»։[1] Ահա հենց այս «Միությունն» էլ, կատարելով ընկեր Ստալինի ցուցումները հայերեն լեզվով սոցիալ-դեմոկրատական անլեգալ թերթ ստեղծելու ուղղությամբ ձեռնամուխ եղավ աշխատանքի։ 1902 թ. հոկտեմբեր 1-ին Ստեփան Շահումյանի, Բոգդան Կնունյանցի և մյուսների ակտիվ մասնակցությամբ Թիֆլիսում լույս է ընծայվում լենինյան իսկրայական ուղղու-

[1] «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն» 1902 թվականի վերջերին կազմակերպչորեն ձուլվում է ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի մեջ. այդ մասին կա նաև «Իսկրայի» վկայությունը (տես «Իսկրա» № 32-ը «Բանվորական շարժումների խրոնիկա և նամակներ գործարաններից» բաժինը)։

թյան հայերեն լեզվով առաջին ապակիր անկեղծ օրգան—«Պրոլետարիատ» թերթը։

«Պրոլետարիատ»-ը պատմական ասպարեզ իջավ լենինյան «Իսկրայի» և ստալինյան «Բրձոլայի» նուռն գործունեության ժամանակաշրջանում և դարձավ նրանց մարտական զինակիցը։

«Պրոլետարիատի» խմբագրությունում աշխատող դեկավարները, զինված լենինյան «Իսկրայի» և «Բրձոլայի» դաղափարներով, գեռևս 1902 թվականի սկզբից երկու ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ էին ծավալել։ Մի կողմից՝ հավաքում էին թղթակցություններ և կազմակերպում թերթի տպագրության տեխնիկական պրոցեսը, մյուս կողմից՝ հայ հասարակության մեջ տարածում էին «Իսկրայի» և «Բրձոլայի» դաղափարները, այդ դիրքերից հարվածներ էին հասցնում ինքնակալությանը, մերկացնում էին հայ լիբերալ բուրժուազիային, նացիոնալիստներին, նրանց լեգալ մամուլին, որը դարձել էր ռեակցիայի ձայնափողը։

Առաջին հարձակումը սկսում է Ստեփան Շահումյանը։ Այդ բանի համար որպես առիթ նա օգտագործում է 1902 թվականի մայիսին Հազարոս Աղայանի գրական-մանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանին Թիֆլիսում կայացած հանդեսը, որտեղ հանդես գալով ռևոլուցիոն սոցիալ դեմոկրատների անունից, դիմակազերծ է անում հայ լիբերալ բուրժուազիային, նրանց ռեակցիոն մամուլը։

Ելնելով ընկեր Ստալինի «Ամբողջության կողմից» («Բրձոլա», № 1) հայտնի հոդվածի սկզբունքներից, Շահումյանը պաշտպանում է անկեղծ մամուլ ստեղծելու անհրաժեշտությունը։ «...Մեր կարծիքով,—ասում է նա—ներկա պայմաններում անհնարին է որևէ առաջադիմական հասարակական գործ կատարել խաղաղ, օրինական ճանապարհով, լեգալ գրականության միջոցով...

Մեր ճանապարհները բոլորովին տարբեր են,—գրում է Շահումյանը,—ազգային կուլտուրական գործունեության փոխարեն, որին Դուք նվիրել եք առավելապես Ձեր ուժերը, մենք քաղաքական-ռևոլուցիոն կռիվ ենք քարոզում։ Բուրժուական «ազատասիրության ու ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ՝

«Կռիվ բռնակալության դեմ,
«Կեցցե քաղաքական ազատությունը»[1]

Բաքվի պրոլետարիատի պայքարի անձնուրաց կազմակերպիչներից Կեցխովելու մարտական զինակից Բոգդան Կնունյանցը իր ձայնը միացնելով Ստեփան Շահումյանին ու ողջ սոցիալ-դեմոկրատիայի ձայնին, համառ պայքար է մղում հայ լիբերալների ու նացիոնալիստների դեմ, նա կրակոտ հոդվածներով հանդես է գալիս լենինյան «Իսկրա»-յում և Բաքվի պարբերական մամուլում «...Նայեցեք վերջին տարիների համարներում,—գրում է Բոգդան Կնունյանցը հայ լիբերալների օրգան «Մշակ» թերթի մասին,—բովանդակության ինչպիսի մակերեսայնություն,—ավելի ճիշտ ինչ-

[1] Այս ճառը 1902 թ. ամռան Ս. Շահումյանի նախաձեռնությամբ Ջալալ-Օղլում (այժմ Ստեփանավան) իր հիմնադրած մարքսիստական խմբակի անդամների օգնությամբ տպագրվեց խմբագրատիպի վրա և տարածվեց։

պիսի վախկոտություն այս կամ այն հարցի լուծման մեջ»։[1] Կնունյանցը մտահոգված լինելով շարժելու լճացած հայ հասարակական կյանքը, քաղաքական պայքարի հասկացողություն մտցնելու հայ ինտելիգենցիայի և պարբերական մամուլի գործունեության մեջ, հայ թերթերից պահանջում էր ընդգիմադիր գիրք բռնել հասարակական ասպարեզում, դեկավարել հայ հասարակական կյանքում արթնացած պրոգրեսը։ Կնունյանցը առաջ էր քաշում հայերեն լեզվով ս. դ. անլեգալ գրականության անհրաժեշտությունը։ Նա սուր քննադատության ենթարկելով հայ նացիոնալիստներին, դաշնակներին՝ գրում էր.

«Նրանք իրենց բոլոր ուժերով ջանում էին կասեցնել կովկասյան հայերի մեջ սոցիալիստական շարժման աճումը»[2], իսկ որպեսզի հնարավոր լինի համախմբելու բանվորներին և ստեղծել բուրժուազիային հակակշիռ պրոլետարիատի միասնական բանակ և պայքարի դուրս բերել նրան, անհրաժեշտ է ոչնչացնել բանվորներին իրարից անջատող նացիոնալիզմը և սոցիալ-դեմոկրատիայի դեկավարությամբ ստեղծել «Ազգությունների տեղական բոլոր լեզուներով լայն ագիտացիոն գրականություն»։

Հենց այդպիսի գրականություն էլ հանդիսացավ «Պրոլետարիատ» թերթը և նրա հետ միասին սիստեմատիկաբար լույս տեսնող հայերեն կոչերն ու բրոշյուրները։

«Պրոլետարիատիս» առաջին համարում տպագրվեցին մի շարք արժեքավոր հոդվածներ՝ նվիրված սոցիալ-դեմոկրատական պարտիայի ծրագրային հարցերին, բանվորական շարժման խնդիրներին։ Այդ բոլոր հոդվածները և տեղերից ստացված թղթակցությունները ամբողջապես համակված էին այն գաղափարներով, որ արծարծում էին Լենինն ու Ստալինը մարքսիստական միասնական պարտիայի ստեղծման համար։ «Պրոլետարիատը» հարազատորեն հետևելով լենինյան «Իսկրայի» և ստալինյան «Բրձոլայի» ուղղությանը, պրոպագանդա էր անում այդ թերթերի սեղուցիոն սկզբունքները, քննադատում և մերկացնում էր «էկոնոմիստների» տարերայնության օպորտունիստական թեորիան, պաշտպանում էր բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն մտցնելու մասին լենինյան-ստալինյան իդեան, իր էջերում արծարծում էր բանվոր դասակարգի քաղաքական պայքարի խնդիրները, պաշտպանում էր քաղաքական պարտիայի դեկավար դերը։ Նա հետևողականորեն մերկացնում էր բունդականների կազմակերպական օպորտունիզմը, բռա ազգային հատկանիշների պրոլետարական պարտիայի կազմակերպման նրանց ֆեդերատիվ սկզբունքը, հիմնավորում և պաշտպանում էր պարտիայի կառուցման դասակարգային միասնության սկզբունքը։ Սիստեմատիկաբար պրոպագանդա էր անում վրացի, հայ, ռուս, ադրբեջանական բանվորների ինտերնացիոնալ համերաշխության համար, նշում էր ռուս սեղուցիոն պրոլետարիատի առաջատար դերը Անդրկովկասյան բազմազգ պրոլետարիատի շարքերում սեղուցիոն պայքարի կազմակերպման գործում։

«Պրոլետարիատ» թերթի ուղղությունը որոշող և նրա առանցքը կազմող հոդվածը «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության մանիֆեստ» խորա-

[1] „Бакинские известия", № 44, 1902.
[2] „Искра" № 51, 1903.
[3] Նույն տեղում։

գիր կրող առաջնորդողն էր, որը տպագրված է թերթի առաջին համարում և փաստորեն մարքսիստական սոցիալ-դեմոկրատական պարտիայի հայացքների համառոտ շարադրանքն է։ Այդ առաջնորդողն իր հիմնական դրույթներում եկակետ էր ունեցել Լենինի դեկավարությամբ «Իսկրայի» մշակած պարտիայի ծրագրի նախագիծը, «Բրձոլայում»՝ ընկեր Ստալինի տպագրած «Խմբագրության կողմից», «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների պարտիան և նրա մերձավորագույն խնդիրները» հոդվածները։ «Ձեռնարկելով ներկա սոցիալ-դեմոկրատական օրգանի հրատարակությունը,—կարդում ենք «Պրոլետարիատի» առաջնորդող Հայ սոցիալ-դեմոկրատների Միության մանիֆեստում,—անհրաժեշտ ենք համարում բացատրել մեր ընթերցողներին այն թեզիսները, որոնք ծառայելու են իբրև հիմունք մեր ծրագրին։ Մեր «Միությունը» Ռուսիայի ամեն ծայրերում յուր ցանցը լայն տարածող Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է հանուն Ռուսիայի—պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի—մասնավորապես։[1]

«Պրոլետարիատի» այս տողերը ամբողջապես համընկնում են ստալինյան «Բրձոլա»-յի այն մտքին, ուր ասված է. «...վրացական սոցիալ-դեմոկրատական շարժումը... ձեռք-ձեռքի է ընթանում ամբողջ ռուսաստանյան շարժման հետ և, հետևապես, ենթարկվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիային։[2]

«Իսկրայի» և «Բրձոլայի» օրինակով «Պրոլետարիատը» պաշտպանում և պրոպագանդ էր անում ռևոլյուցիոն մարքսիզմի, գիտական սոցիալիզմի գաղափարները, մերկացնում և ջախջախիչ հարվածներ էր հասցնում ռուսական «էկոնոմիստներին» և բերնշտայնականությանը։ «Սոցիալիստական իդեալի իրականացումը, դրում է «Պրոլետարիատը»—մեր կարծիքով անհնարին է բանվոր դասակարգի, ոչ տնտեսական ինքնագործունեությամբ, ոչ էլ մասնակի քաղաքական և սոցիալական ռեֆորմներով. այն հնարավոր է միայն գոյություն ունեցող ամբողջ կարգի արմատական հեղաբեկման միջոցով, սոցիալիստական ռևոլյուցիայի միջոցով, որի անհրաժեշտ նախերգանքը պետք է ծառայի պրոլետարիատի քաղաքական դիկտատուրան։[3]

«Պրոլետարիատը» այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ էր համարում սոցիալ-դեմոկրատիայի դեկավարությամբ համախմբել և կազմակերպել պրոլետարիատին, դեկավարել նրա տնտեսական ու քաղաքական պայքարը և վերջապես նրան դաստիարակել սոցիալիզմի ոգով, «այդ իսկ պատճառով,—ասված է թերթում,—մեր մատաղ շարժումը իր մոտավոր նպատակն ունի՝ բարձրացնել մեր բանվորական մասսաներում քաղաքական կռվի անհրաժեշտ գիտակցությունը, միացնել նոցա ու մասնակից անել համառուսական շարժմանը, միասնություն տալու համար։[4] Թերթը հաջող կերպով շարադրել է նաև իր հայացքները ազգային հարցի վերաբերյալ։ Ջերմորեն ողջունելով «Պրոլետարիատին», Վ. Ի. Լենինը 1903 թվականի փետրվարի 1-ին «Իսկրայի» № 33-ում հանդես եկավ «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» մեծածավալ հոդվածով։ «Կռվկառում երե-

[1] «Պրոլետարիատ» № 1, հոկտեմբերի 1, 1902 թ.։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 7։
[3] «Պրոլետարիատ» № 1, 1902 թ. հոկտեմբերի 1։
[4] Նույն տեղում։

վան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների Միությունը»,— գրում է Վ. Ի. Լենինը։—Այդ Միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով։ Մենք ստացել ենք № 1-ը այդ օրգանի, որը կոչվում է «Պրոլետարիատ» և որի վերնագրում նշված է «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա»։[1]

Վ. Ի. Լենինը հավանություն տալով թերթի ուղղությանը, ամբողջապես վերաշարադրում է նրա առաջնորդողը. դիտողություն է անում ֆեդերացիայի հարցի ոչ ճիշտ ձևավորման առթիվ և խորհուրդ է տալիս ուղղել այն։ «... Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը,—գրում է Լենինը։—Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը»։[2]

Այսպիսով վրացերեն «Բրձոլա» և հայերեն «Պրոլետարիատ» թերթերի հրատարակությունը խոշոր իրադարձություն հանդիսացավ մեր պարտիայի, մասնավորապես Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունների կյանքում։

1903 թ. սկզբներից օր-օրի աճող բանվորական ուսուցիոն շարժումները, այդ շարժման մեջ ընդգրկված՝ Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի կենսական շահերը, պարտիայի առաջ կանգնած այդ ժամանակվա խնդիրները անհապաղ պահանջում էին Անդրկովկասում ստեղծել պարտիական միացյալ բազմատիրաժ մի պարբերական, որը սիստեմատիկաբար լույս տեսներ միաժամանակ՝ վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով։

Այդ բանը կենսագործվեց 1903 թվականի մարտին, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Թիֆլիսում հրավիրված Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարում։ Համագումարը ձևակերպում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միություն, ընտրում է Կովկասյան Միության Կենտրոնական կոմիտե։ Ընկեր Ստալինը, որ բանտարկված էր, բացակա կերպով ընտրվում է կոմիտեի կազմի մեջ։ Մի շարք կարևոր հարցերի հետ մեկտեղ՝ համագումարը քննում է Կովկասյան Միության մամուլի օրգան ստեղծելու հարցը։ Համագումարի որոշմամբ վրացերեն «Բրձոլա» և հայերեն «Պրոլետարիատ» թերթերը միացվում են և 1903 թվի ապրիլ—մայիս ամսից նրանց փոխարեն լույս է տեսնում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության անլեգալ օրգան «Պրոլետարիատիս բրձոլա» («Պրոլետարիատի կոիվը») թերթը՝ վրացերեն, հայերեն, իսկ հետագայում նաև ռուսերեն լեզուներով։

Թերթի խմբագրությունը գլխավորում էր ընկեր Ստալինը։ Խմբագրության մեջ էին մտնում նաև Ս. Ծուլուկիձեն, Ս. Շահումյանը և մյուսները։ «Կովկասում բոլշևիկմի դիրքերի պաշտպանության գործում,—ասված է այդ թերթի մասին Ի. Վ. Ստալինի համառոտ կենսագրության մեջ,—Լենինի իդեաների պրոպագանդայի ու զարգացման մեջ վճռական դերը պատկանում էր Ստալինի խմբագրությամբ լույս տեսնող՝

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 408։
[2] Նույն տեղում, էջ 411։

ՌՍԴԲՊ Կովկասյան միության օրգան «Պրոլետարիատիս բրձոյա»-ին՝ «Բրբձոյա»-ի արժանավոր հաջորդին»։

Այսպիսով ստալինյան «Բրձոյանն» անջնջելի հետք թողեց Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունների և մեր պարտիայի մամուլի ողջ պատմության մեջ։ Նա բոլշևիկյան մամուլի առաջնեկը եղավ Անդրկովկասում։

* * *

Լրացավ կես դար ստալինյան «Բրձոյայի» առաջին համարի լույս տեսնելու օրվանից — մի ժամանակաշրջան, որը հանդիսացավ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդներ Լենինի — Ստալինի իդեանների հաղթանակի ժամանակաշրջանը, երբ Լենինի և Ստալինի կողմից ստեղծված և կոփված, աշխարհում ամենառևոլուցիոն, ամենակազմակերպված բոլշևիկյան պարտիայի շնորհիվ ցախցախվեց և հողմացրիվ արվեց ցարական բռնապետությունը և բուրժուական տիրապետությունը Ռուսաստանում։

Այդ ռևոլուցիան մեր երկիրը հասցրեց պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակին, ապահովեց սոցիալիզմի հաղթանակը Սովետական Միության մեջ, որն այժմ հաջողությամբ կառուցում է կոմունիստական հասարակակարգը։

Լենինը և Ստալինը հիմնադրեցին և կոփեցին բոլշևիկյան մամուլը։ Նրա առաջին օրգանների՝ լենինյան «Իսկրայի», ստալինյան «Բրձոյայի» փառապանծ տրադիցիաներով՝ սովետական մեր ապատ մամուլը իր հարյուր հազարավոր թերթերով այժմ դարձել է հզոր միջոց՝ մասսաների կազմակերպման, մեր երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման, աշխատավորների կոմունիստական դաստիարակության համար։

Այսօր, սովետական ողջ հասարակայնության հետ միասին, սովետական մամուլը «Բրձոյայի 50-ամյակը նշում է պատերազմի կանխման համար իր մղած եռուն պայքարի պայմաններում, նա ճշմարտացիորեն մերկացնում է պատերազմի հրձիգների — ամերիկա-անգլիական իմպերիալիստների բոլոր մեքենայությունները, «ազնիվ գործ է կատարում խաղաղության համար, կոմունիստական շինարարության նոր հաղթանակների համար մղած պայքարում» («Պրավդա»)։

---

1 «Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին, Համառոտ կենսագրություն», էջ 26, Հայպետհրատ, Երևան, 1949 թ.։